ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Պայքար կիբեռհանցավորության դեմ հանուն կիբեռկայունության Արևելյան գործընկերության տարածաշրջանում (2019թ. հունիս - 2022թ. հունիս)

ԿիբեռԱրևելք ծրագիրն աջակցում է Արևելյան գործընկերության երկրների իշխանություններին մշակել ***քաղաքականություն և օրենսդրություն*** *Կիբեռհանցագործությունների մասին Բուդապեշտի կոնվենցիային համապատասխան՝ ամրապնդելով* ***քննիչների, դատախազների և դատավորների հմտությունները*** *կիբեռհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցների ոլորտում, ինչպես նաև նպաստելով* ***միջգերատեսչական, միջազգային*** *և* ***հանրային-մասնավոր համագործակցության*** *բարելավմանը:*

- Սկզբնական փուլի շրջանակներում Հայաստանում գնահատվել են **կիբեռհանցագործությունների և էլեկտրոնային ապացույցների ոլորտում վերապատրաստման կարիքները և հնարավորությունները՝** ներպետական գործընկերների հետ հանդիպումների շարքի միջոցով, և արդյունքներն ամփոփվել են տարածաշրջանային զեկույցում:
- ԵԱՀԿ-ի հետ համատեղ ջանքերի շրջանակներում ծրագիրն անդրադարձել է **քաղաքականության և օրենսդրության՝** Բուդապեշտի կոնվենցիայով նախատեսված պահանջներին Երևանում անցկացվող՝ ԵԱՀԿ անվտանգության ռազմավարության սեմինարի ընթացքում:
- Հայաստանում **տվյալների պահպանման օրենսդրության բարեփոխման** անհրաժեշտ պահանջները քննարկվել են ծրագրի շրջանակներում կազմակերպված՝ տվյալների պահպանմանը և ծառայություն մատուցողների հետ համագործակցությանը նվիրված աշխատաժողովի ընթացքում:
- Ծրագրի շրջանակներում ներպետական իշխանություններին տրամադրվել է Հայաստանի **Քրեական դատավարության օրենսգրքի նախագծի վերլուծությունը** Կիբեռհանցագործությունների մասին Բուդապեշտի կոնվենցիայի պահանջների լույսի ներքո:
- Երկրի թիմի անդամները մասնակցել են օտարերկրյա ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համագործակցությանը նվիրված Միջազգային ժողովին, որի ընթացքում եղել է բաց քննարկում միջոցառմանը ներկայացված բոլոր տարածաշրջանների **հանրային-մասնավոր համագործակցության** փորձի վերաբերյալ:
- COVID-19-ի սահմանափակումների պայմաններում Հայաստանի իշխանությունները մասնակցել են մի շարք առցանց վեբինարների, որոնք կազմակերպվել են **կիբեռհանցավորության դեմ պայքարի ոլորտում** արդի հարցերի, այն է՝ միջամտություն ընտրություններին, համակարգչային անվտանգության պատահարների արձագանքման կենտրոնների (CSIRT) հետ համագործակցություն և կիբեռբռնություն, քննարկման նպատակով:

Funded by the European Union and the Council of Europe
EUROPEAN UNION
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE
Implemented by the Council of Europe

- COVID-19-ի սահմանափակումների պայմաններում Հայաստանի իշխանությունները մասնակցել են տարածաշրջանային **համակարգչային հետազոտություններին** և հարցումներին տվյալների պաշտպանության, իրավապահ մարմինների/ծառայություն մատուցողների համագործակցության և տվյալների պահպանման խնդիրների վերաբերյալ:

Այս ծրագրի մասին ամփոփ տեղեկատվությունը հասանելի է ծրագրի ինտերնետային կայքում:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝
https://www.coe.int/en/web/cybercrime/cybercrime-office-c-proc-

Funded by the European Union and the Council of Europe
EUROPEAN UNION
COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE
Implemented by the Council of Europe